

ԹՈՒՐԲԻԱ-ՊԱԿԻՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ****Ա. Ս. Սիմավորյան***Սեղմագիր*

Հոդվածի նպատակն է ներկայացնել Թուրքիայի և Պակիստանի միջև վերջին տասնամյակում ընթացող ռազմական համագործակցությունը՝ ընդգծելով դրա շարժառիթները, համագործակցության հիմնական ոլորտները: Մասնավորապես, ուսումնասիրությունում ներկայացրել ենք համատեղ զորավարությունների և արտահանվող սպառազինությունների տեսակները, ռազմարդյունաբերության ոլորտում համագործակցությանն առնչվող հարցերը, ինչպես նաև այս գործընկերության հնարավորություններն ու մարտահրավերները:

СОТРУДНИЧЕСТВО ТУРЦИИ И ПАКИСТАНА**В ВОЕННО-ТЕХНИЧЕСКОЙ СФЕРЕ****Симаворян А. С.***Аннотация*

Цель статьи – представить продолжающееся военное сотрудничество между Турцией и Пакистаном за последнее десятилетие, выделив его первопричины и основные направления. В исследовании рассматриваются виды совместных военных учений и экспортируемых вооружений; вопросы, связанные с сотрудничеством в развитии военной промышленности, а также возможности и вызовы этого партнерства.

TURKEY-PAKISTAN MILITARY-TECHNICAL COOPERATION**Simavoryan A. S.***Summary*

The purpose of this article is to present the ongoing military cooperation between Turkey and Pakistan over the past decade, highlighting its motivations and main areas. The study presents the types of joint military exercises and weapons exports, issues related to cooperation in the development of the military industry, as well as the opportunities and challenges of this partnership.

Արեստակես Ս. Սիմավորյան¹

ԹՈՒՐՔԻԱ-ՊԱԿԻՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ²

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անկարայի և Իսլամաբադի միջև ռազմատեխնիկական հարաբերությունները վերջին տարիներին զարգացել են՝ վերածվելով ռազմավարական գործընկերության: Այս համագործակցությունն ընդգրկում է տարբեր ոլորտներ, ներառյալ՝ սպառազինության առևտուրը, համատեղ զորավարությունները, տեխնոլոգիական զարգացումն ու փոխանցումը:

Համագործակցության հաստատութենական հիմքերը դրվել են դեռևս 1988 թ., երբ պաշտպանական և ռազմական երկկողմ հարաբերությունների ամրապնդման նպատակով ստեղծվեց Պակիստանի և Թուրքիայի ռազմական խորհրդատվական խումբը (MCG): MCG-ն հետագայում վերածվեց Բարձր մակարդակի ռազմական երկխոսության խմբի (HLMDSG): Այն ստեղծվել է 2003 թ. հունիսին, երբ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը իշխանության գալուց հետո այցելեց Պակիստան: Ըստ որոշ տեղեկությունների, այս համագործակցությունը խրախուսվել էր ԱՄՆ-ի կողմից³:

2003 թ. ի վեր այս խումբը հանդիպել է 18 անգամ, վերջինը՝ 2024 թ. փետրվարին Անկարայում: Պակիստանի պատվիրակությունը գլխավորում էր պաշտպանության նախարարության քարտուղար, գեներալ-լեյտենանտ Համուդ ուզ Զաման Խանը, իսկ

¹ Արևելագետ, թուրքագետ: 2008–2019 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում որպես Հայագիտական կենտրոնի ղեկավար, 2014–2021 թթ.¹ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն»-ի գիտաշխատող: 2019-2021 թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վերլուծական ծառայության» բաժնում որպես ավագ փորձագետ: 2021–2022 թթ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի «Գիտահետազոտական աշխատանքների և միջազգային կապերի բաժնի» գլխավոր արխիվագետ: 100-ից ավելի գիտավերլուծական հոդվածների և 12 կոլեկտիվ մենագրության հեղինակ է:

² Հոդվածը խմբագրություն է հանձնվել 27.07.2024 թ.:

³ Aamir Shah. Pakistan, Turkey to improve defense ties. (06.02.2002). <https://www.upi.com/Defense-News/2002/02/06/Pakistan-Turkey-to-improve-defense-ties/64031013029039/> (բեռնման օրը՝ 13.07.2024).

թուրքական պատվիրակությունը՝ Թուրքիայի գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ Իրֆան Օզսերթը: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում՝ պաշտպանական ոլորտում երկու երկրների միջև համագործակցության ողջ սպեկտրը: Երկու ղեկավարներն էլ գոհունակություն են հայտնել «պաշտպանական ոլորտում համագործակցության տրամադրության կապակցությամբ և խոստացել են այն նոր բարձունքների հասցնել»⁴:

Ըստ էության, Բարձր մակարդակի ռազմական երկխոսության խումբն (HLMDG) էլ պետք է արդյունավետ դեր խաղա երկկողմ պաշտպանական կապերի բարելավման գործում:

Ստորև ներկայացնենք երկու երկրների միջև ռազմատեխնիկական ոլորտում ընթացող համագործակցությունն՝ ըստ ոլորտների:

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

TF-X KAAN մարտական ինքնաթիռի ծրագիրը

Թուրքիան ձգտում է ռազմական համագործակցություն հաստատել Պակիստանի հետ՝ մարտական ինքնաթիռների և հրթիռների համատեղ արտադրության համար: Մասնավորապես, Պակիստանը պաշտոնապես միացել է Թուրքիայի օդատիեզերական արդյունաբերության (թուրքերեն հապավումը՝ TAI) 5-րդ սերնդի *Kaan* կործանիչների մշակման աշխատանքներին: Այս նախագծին Պակիստանի մասնակցությունը քննարկվել է Անկարայի և Իսլամաբադի միջև 2023 թ. օգոստոսին: Սակայն, որոշ աղբյուրների համաձայն՝ նախքան նախատեսված քննարկումները մոտավորապես 200 պակիստանցի ինժեներներ և տեխնիկներ մասնակցում էին այս ծրագրի մշակմանը⁵:

Սա, ամենայն հավանականությամբ, վերաբերում է 2019 թվականից Պակիստանի «Ազգային գիտական և տեխնոլոգիական» պարկում (NSTP)՝ Թուրքիայի օդատիեզերական արդյունաբերության դուստր ձեռնարկության՝

⁴ 18th round of Pakistan-Turkiye HLMDG held at Defence Ministry. (16.02.2024). <https://www.pakistantoday.com.pk/2024/02/16/18th-round-of-pakistan-turkiye-hlmdg-held-at-defence-ministry/> (բեռնման օրը՝ 13.07.2024).

⁵ Mehmet Yiğit Tanış. Türkiye ile Pakistan MMU KAAN projesinde işbirliğine yakın. (25.07.2023). <https://www.savunmatr.com/turkiye-ile-pakistan-mmu-kaan-projesinde-is-birligine-yakin/> (բեռնման օրը՝ 13.07.2024).

Ավիատիեզերական արդյունաբերության ընկերության (թուրքերեն հապավումը՝ TUSAŞ) գրասենյակում աշխատող Պակիստանի աշխատակազմին (գրասենյակում աշխատողների թիվը կավելացվի՝ կախված աշխատանքի ինտենսիվությունից): Այս համագործակցության արդյունքում, *TUSAŞ-ի* ղեկավարությունը հայտարարեց, որ կուսումնասիրի Պակիստանի համալսարաններում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական (R&D) աշխատանքների հնարավորությունները և, իր հերթին, համապատասխանաբար կընդլայնի իր ներկայությունը⁶:

Կործանիչի ստեղծման *KAAN* նախագծում ներառված է նաև Ադրբեջանը, և ըստ տեղեկությունների՝ այս ինքնաթիռի որոշ մասեր արտադրվում է Ադրբեջանում, որում ներգրավված է շուրջ 200 մասնագետ⁷: Ինչ վերաբերում է Պակիստանին, ապա համագործակցության շրջանակներում սերիական արտադրության համար հաստատված *Kaan* կործանիչի որոշ ենթահամակարգեր էլ արտադրվելու են Պակիստանում: Իսլամաբադում գտնում են, որ «այս հավակնոտ գործընկերությունը ձգտում է բարելավել երեք երկրների միջև ռազմավարական կապերը՝ միաժամանակ հեղափոխելով ինքնաթիռների արդյունաբերությունը»⁸:

Այնուամենայնիվ, անորոշ է մնում այն հարցը, թե գործընկեր երկրները, հատկապես՝ Պակիստանը, ի՞նչ ներդրում կարող է ունենալ այս նախագծում: Փորձագիտական գնահատականներով՝ գրեթե սնանկացած Պակիստանը ի վիճակի չէ ո՛չ տեխնոլոգիական, ո՛չ էլ ֆինանսական աջակցություն տրամադրել նախագծին և կարող է միայն ծանրաբեռնել Թուրքիային, ի տարբերություն Ադրբեջանի, որը հնարավորություն ունի գոնե ֆինանսապես աջակցել նախագծին: Չնայած նման գնահատականին, կա նաև տեսակետ, որ Իսլամաբադը կարող է արտադրել պահեստամասեր՝ մակերևութային հսկիչներ, հիդրոտեխնիկա և վայրէջքի համար նախատեսված սարքավորումների բաղադրիչներ⁹:

⁶ Bilal Khan. Turkish Aerospace Opens Office in Pakistan. (06.01.2020). <https://quwa.org/daily-news/turkish-aerospace-opens-office-in-pakistan/> (բեռնման օրը՝ 13.07.2024).

⁷ Elbeyi Hasanli. Türkiye Batı'yi şaşkına çevirdi. (14.03.2024). <https://www.tarihistan.org/turkiye-bati-yi-saskina-cevirdi/27544/> (բեռնման օրը՝ 13.07.2024).

⁸ Nazia Sheikh. The new era of Pakistan-Turkey Defence ties. (25.08.2023). <https://www.pakistantoday.com.pk/2023/08/25/the-new-era-of-pakistan-turkey-defence-ties/> (բեռնման օրը՝ 13.07.2024).

⁹ Ashish Dangwal. Bankrupt Pakistan 'Burdens' 5th-Gen TFX-Kaan Fighter Program; Lacks Financial, Tech Muscle to Aid Turkey. (05.09.2023). <https://www.eurasiantimes.com/kaan-fighter-jet-turkey-could-partner-pakistan/> (բեռնման օրը՝ 13.07.2024).

F-16-ի արդիականացման ծրագիրը

2009 թ. հունիսի 29-ին Պակիստանի պաշտպանության նախարարության և Թուրքիայի օդատիեզերական արդյունաբերության միջև ստորագրված համաձայնագրով, Իսլամաբադը սկսեց արդիականացնել իր F-16 մարտական ինքնաթիռները: Ծրագրի շրջանակներում՝ սկսած 2010 թ.-ից առ այսօր արդիականացվել է 41-ից ավելի F-16-եր, ինչը Պակիստանին արժեցել է 75 մլն ԱՄՆ դոլար: Այս նախագծով կազմակերպվել է օդաչուների ուսուցում արդիականացված ինքնաթիռների վրա, ինչպես նաև՝ ավիացիոն ոլորտի շուրջ 70 պակիստանցի տեխնիկների վերապատրաստման դասընթացներ^{10,11}:

Բացի այս ծրագրից, Պակիստանը նաև այլ ակնկալիքներ ունի, որն այդքան էլ չի վերաբերում սեփական ավիացիոն պարկում առկա մարտական ինքնաթիռների տեխնիկական մասով արդիականացմանը: Մասնավորապես, 2024 թ. հունիսի 13-ին Անկարա է այցելել Պակիստանի բարձրաստիճան գինվորական գեներալ Սահիր Շամշադ Միրզան, ով հանդիպումներ է ունեցել Թուրքիայի ՊՆ ղեկավարի, ռազմական և ռազմարդյունաբերության ոլորտի պատասխանատուների հետ: Չնայած նրան, որ թուրքական կողմը չէր բացահայտում այս այցելության բուն առաքելությունը, այդուհանդերձ, ըստ հնդկական աղբյուրների՝ քննարկման առանցքային թեման թուրքական F-16 կործանիչների հնարավոր ձեռքբերումն է եղել:

Բանն այն է, որ Պակիստանի ռազմաօդային ուժերը ներկայումս շահագործում են մոտ 75 հատ F-16-եր, սակայն դրանց զգալի մասը՝ շուրջ 57-ը, ավելի հին մոդելներ են, որոնք Պակիստանը ցանկություն ունի գործածությունից հանել: ԱՄՆ-ն, որը Պակիստանի ռազմական տեխնիկայի ավանդական մատակարարներից մեկն է, վերջերս հրաժարվել է Իսլամաբադին F-16-ի նոր խմբաքանակ տրամադրել: Այս իրավիճակը երկրին մղում է այլընտրանքային տարբերակներ որոնել: Թուրքիան ունի F-16-երի մեծ խմբաքանակ՝ ներառյալ ավելի հին C/D տարբերակները¹²: Քանի որ ԱՄՆ-ը Թուրքիային առաջարկում է 40 նոր F-16-երի

¹⁰ TAI completes upgraded F-16 deliveries to Pakistan Air Force. (03.09.2014). <https://www.airforce-technology.com/news/newstai-completes-upgraded-f-16-deliveries-to-pakistan-air-force-4362074/> (բեռնման օրը՝ 13.07.2024).

¹¹ TUSAŞ Pakistan F-16'larinin modernizasyonu. (01.09.2014). <https://www.trthaber.com/haber/bilim-teknoloji/tusas-pakistan-f-16larinin-modernizasyonu-142495.html> (բեռնման օրը՝ 13.07.2024).

¹² Pakistan Eyes Surplus Turkish F-16s to Bolster Air Force. (13.07.2024). <https://idrw.org/pakistan-eyes->

փաթեթ¹³, ուստի պակիստանյան կողմը գտնում է, որ դրանց ձեռք բերումից հետո թուրքական C/D մոդելների կործանիչները կարող են հասանելի լինել:

T129 ATAK ուղղաթիռներ

Պակիստանը ցանկանում էր ձեռք բերել նաև հարձակողական և հետախուզական առաքելությունների համար նախատեսված T129 ATAK ուղղաթիռը, որը մշակվել է Թուրքիայի օդատիեզերական արդյունաբերության և եվրոպական *Agusta-Westland* ընկերության հետ համագործակցության շրջանակներում: Դեռևս 2018 թ. հուլիսին Թուրքիան և Պակիստանը համաձայնագիր կնքեցին, որի շրջանակներում Թուրքիան Պակիստանին պետք է վաճառեր 30 թուրքական T129 ATAK ուղղաթիռներ¹⁴: Արժեքը՝ մոտ 1,5 մլրդ ԱՄՆ դոլար: Գումարային տեսանկյունից գործարքը Թուրքիայի՝ այլ պետությունների հետ այս ոլորտում երբևէ կնքված պաշտպանական արդյունաբերության արտահանման ուղղված ամենամեծ պայմանագիրն էր: Համաձայնագրով նախատեսվում էր ուղղաթիռները մատակարարել 5 տարվա ընթացքում: Գործարքը նախատեսված էր ամրապնդելու Թուրքիայի և Պակիստանի միջև պաշտպանական ոլորտում կապերը՝ միաժամանակ ուժեղացնելով Իսլամաբադի ռազմական ավիացիայի կարողությունները:

Այնուամենայնիվ, ստորև բերված հանգամանքներով պայմանավորված՝ այն ի կատար չաձվեց: ԱՄՆ-ը հրաժարվեց *LHTEC-ի* (բրիտանական *Rolls Royce-ի* և ամերիկյան *Honeywell* ընկերության հետ համատեղ ձեռնարկություն) արտադրած T800-4A շարժիչների արտահանման լիցենզիաներ տրամադրել թուրքական T129 ATAK ուղղաթիռների համար՝ պատճառաբանելով Վաշինգտոնի և Անկարայի միջև դիվանագիտական լարվածությամբ: Ոմանք դա կապում են Թուրքիայի կողմից ռուսական արտադրության S-400 ՀՕՊ համակարգերի ձեռքբերման հետ: Չնայած Թուրքիայի դիվանագիտական ջանքերին և ԱՄՆ-ի լոբբիստական

[surplus-turkish-f-16s-to-bolster-air-force/](#) (բեռնման օրը՝ 18.07.2024).

¹³ ABD-Türkiye arasindaki 23 milyar dolarlik F-16 sözleşmesinde azaltmaya gidildi. (12.07.2024). https://www.google.com/search?q=Temmuz&rlz=1C1BNSD_enAM1097AM1097&sourceid=chrome&ie=UTF-8 (բեռնման օրը՝ 18.07.2024).

¹⁴ Pakistan ve Türkiye arasında T129 Atak Helikopteri Alimi için Sözleşme İmzalandı. (25.05.2018). <https://www.defenceturkey.com/en/content/pakistan-ve-turkiye-arasinda-t129-atak-helikopteri-alimi-icin-sozlesme-imzalandi-3019> (բեռնման օրը՝ 18.07.2024).

ընկերությունների աջակցությանը¹⁵, մինչև 2022 թ. գործարքի իրականացումը մնում էր անորոշ: 2022 թ. հունվարին հայտնի դարձավ, որ Պակիստանը հրաժարվել է գործարքից և թուրքական արտադրության ուղղաթիռների փոխարեն հակված է ձեռք բերել չինական Z-10ME ուղղաթիռները¹⁶: Չստացված գործարքի արդյունքում, Անկարան պետք է վերադարձնի Պակիստանի 160 մլն ԱՄՆ դոլարի կանխավճարը, որը վճարվել էր Թուրքիայի օդատիեզերական արդյունաբերությանը:

MFI-395 SUPER MUSHSHAK պակիստանյան ուսումնական ինքնաթիռի գնման նախագիծը

Թուրքիան ոչ միայն սպառազինություն է արտահանում Պակիստան, այլև՝ այնտեղից գնում: Այսպես, 2016 թ.-ին Թուրքիայի և Պակիստանի միջև ստորագրվեց *MFI-395 Super Mushshak* ուսումնական ինքնաթիռների մատակարարման պայմանագիր: Որպես դրա շարունակություն, 2017 թ. «IDEF 2017» պաշտպանական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսի շրջանակներում Թուրքիայի օդատիեզերական արդյունաբերության և Պակիստանի ավիացիոն համալիրի (PAC) միջև ստորագրվեց ավիացիայի ոլորտում համագործակցության համաձայնագիր, որով նախատեսվում էր գնել Պակիստանից *Super Mushshak*-ներ: Դրանց մատակարարումը Թուրքիա պետք է սկսվեր դեռևս 2020 թ. հունիսին, սակայն գործընթացը հետաձգվեց թագավարակի բռնկման և տեխնիկական տարբեր խնդիրների պատճառով:

2022 թ. հոկտեմբերին Թուրքիայի պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ արդեն Պակիստանից երեք ***Super Mushshak*** ուսումնական ինքնաթիռ է մատակարարվել, որոնք գտնվում են Յալովայի օդանավակայանի ռազմաօդային ուժերի հրամանատարության տրամադրության տակ¹⁷: Պակիստանի ավիացիոն համալիրը (PAC) կնքված պայմանագրի համաձայն 52 ինքնաթիռ պետք է մատակարարի Թուրքիայի ռազմաօդային ուժերին, որոնք կօգտագործվեն

¹⁵ Anwar Iqbal. US blocks delivery of Turkish gunships to Pakistan. (10.03.2021). <https://www.dawn.com/news/1611685> (բեռնման օրը՝ 18.07.2024).

¹⁶ Ayşe Betül Bal. Pakistan cancels Turkish chopper deal amid US license deadlock. (06.01.2022). <https://www.dailysabah.com/business/defense/pakistan-cancels-turkish-chopper-deal-amid-us-license-deadlock> (բեռնման օրը՝ 18.07.2024).

¹⁷ Muhammed Ayyildiz. TUSAŞ'ta Super Mushshak Sesleri. (19.10.2022). <https://www.savunmasanayist.com/tusasta-super-mushshak-sesleri/> (բեռնման օրը՝ 18.07.2024).

թուրքական կործանիչների՝ F-16-երի համար նախատեսված օդաչուների պատրաստման համար: Այս ինքնաթիռների ձեռքբերումից հետո Թուրքիայի ռազմաօդային ուժերի ղեկավարությունը որոշում է կայացրել փոխարինել իտալական արտադրության *Leonardo SF-260*՝ արդեն հնացած ուսումնական ինքնաթիռները *Super Mushshak*-ով¹⁸:

Գլխավոր հարցը, թե ինչու՞ և ի՞նչ պատճառներով է Թուրքիան գնում հատկապես պակիստանյան արտադրության ուսումնական ինքնաթիռներ, պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ 2016 թ. հուլիսի 15-ի հեղաշրջման փորձից հետո Թուրքիան ժամանակավորապես հեռացրեց ծառայությունից F-16-ի բազմաթիվ օդաչուների կամ ձերբակալեց նրանց՝ պատճառաբանելով, որ նրանք դերակատարություն են ունեցել հեղաշրջման փորձում: Այս իրադարձությունից հետո, Արևմուտքի ու, հատկապես, Վաշինգտոն-Անկարա հարաբերությունների սրման հետնապատկերում ԱՄՆ-ը մերժեց Թուրքիայի՝ նոր օդաչուների արագացված դասընթացներով պատրաստման խնդրանքը¹⁹, իսկ եվրոպական մի շարք ընկերություններ մերժեցին վաճառել ուսումնական ինքնաթիռներ, որից հետո Անկարան ուսումնական աջակցություն խնդրեց Իսլամաբադից: Թեև Պակիստանը խոստացել էր իր փորձառու օդաչուներին ուղարկել հենց հաջորդ օրը, սակայն ԱՄՆ-ը հայտարարեց, որ դա հնարավոր չէ անել երկկողմ պայմանավորվածությունների և օդանավերի համակարգերում առկա տարբերությունների պատճառով:

Կարելի է ասել, որ այս իրադարձությունները, որոնք փակուղու մեջ դրեցին Անկարային, ստիպեցին, որպեսզի թուրքերն իրենց հայացքը շրջեն դեպի Պակիստան, նամանավանդ, որ Իսլամաբադը արդեն ահռելի փորձ ուներ *Super Mushshak-ներն* այլ երկրներ, մասնավորապես՝ Ադրբեջան, Իրան, Նիգերիա, Օման, Սաուդյան Արաբիա, Իրաք մատակարարելու գործում:

Երկու երկրների միջև 2017 թ. մարտի 9-ին Անկարայում ստորագրվեց «Թուրքիայի Հանրապետության և Պակիստանի Իսլամական Հանրապետության կառավարությունների միջև պահեստամասերի և սարքավորումների տրամադրման

¹⁸ Franz-Stefan Gady. Pakistan to Sell 52 Military Aircraft to Turkey. (12.05.2017). <https://thediplomat.com/2017/05/pakistan-to-sell-52-military-aircraft-to-turkey/> (բեռնման օրը՝ 18.07.2024).

¹⁹ ABD yeni Türk pilotlara F-35 eğitimi vermeme kararı aldı. (07.06.2019). <https://www.politikyol.com/abd-yeni-turk-pilotlara-f-35-egitimi-vermeme-karari-aldi> (բեռնման օրը՝ 18.07.2024).

մասին համաձայնագիր», որի համաձայն՝ Թուրքիան Պակիստանին տրամադրել է մի քանի միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ պահեստամասեր և սարքավորումներ՝ T-37 դասի ամերիկյան արտադրության ուսումնական նշանակության ինքնաթիռների համար²⁰:

Համագործակցությունը ԱԹՍ-ների ոլորտում

Անկարա-Իսլամաբադ համագործակցությունն անօդաչու թռչող սարքերի (այսուհետ՝ ԱԹՍ) ոլորտում ընթանում է գլխավորապես երեք հարթությունում՝ **ա) ԱԹՍ-ների վաճառք, բ) ԱԹՍ-ների բաղադրիչների համապեղ արտադրություն, գ) ԱԹՍ-ներին առնչվող տեխնոլոգիաների հեղափոխություն:**

ա) ԱԹՍ-ների վաճառք: Բարդ է ասել, թե Պակիստանի ռազմական գույքացուցակում որքան է թուրքական ԱԹՍ-ների քանակը և որ ձեռնարկության արտադրության մոդելներ են: Խնդիրն այն է, որ թե՛ Թուրքիան, թե՛ Պակիստանը աշխատում էին գաղտնի պահել ԱԹՍ-ների վաճառքը: Համեմատաբար վերջերս՝ արբանյակային դիտարկումներից հետո պարզվել է, որ Պակիստանի ռազմաօդային համալիրում առկա են թուրքական արտադրության ԱԹՍ-ներ, որից հետո երկկողմ լռությունն ընդհատվեց: Արդյունքում, հայտնի դարձավ, որ 2021 թ. ստորագրված համապարփակ համաձայնագրով Պակիստանը *Baykar-ից* պատվիրել է Bayraktar TB2 անօդաչու թռչող սարք, և՛ համաձայնագիր է ստորագրել Թուրքիայի օդատիեզերական արդյունաբերության հետ՝ ANKA-S տիպի ԱԹՍ-ների համատեղ մշակման և արտադրության մասին: 2022 թ. նաև հայտնի դարձավ, որ Պակիստանը Թուրքիայից ձեռք է բերել նաև 3 հատ Bayraktar TB2 (UCAV) զինված անօդաչու թռչող սարք, և ըստ պակիստանյան հաղորդագրությունների՝ ևս 6 միավոր Bayraktar TB2 պետք է մատակարարվի հետագա տարիներին²¹: Ավելորդ չէ նշել, որ Պակիստանի ռազմաօդային ուժերը հաջողությամբ ինտեգրել են տեղական արտադրության BURQ հրթիռը Bayraktar TB2 UCAV-ի հետ²²:

²⁰ Türkiye'den Pakistan'a 120 milyon TL'lik askeri hibe. (14.05.2017). <https://www.aa.com.tr/tr/dunya/turkiyeden-pakistan-a-120-milyon-tlik-askeri-hibe/817662> (բեռնման օրը՝ 18.07.2024).

²¹ Pakistan'in Bayraktar TB2 SİHA Tedarik Ettigi İddiasi. (08.01.2022). <https://www.savunmasanayist.com/pakistanin-bayraktar-tb2-siha-tedarik-ettigi-iddiasi/> (բեռնման օրը՝ 16.07.2024).

²² Yusuf Emir İşik. Bayraktar TB2 SİHA'ya Pakistan mühimmatı entegrasyonu. (16.01.2024). <https://www.defenceturk.net/bayraktar-tb2-sihaya-pakistan-muhimmatı-entegrasyonu> (բեռնման օրը՝ 16.07.2024).

2024 թ. հայտնի դարձավ, որ Պակիստանը ԱԹՍ-ների իր զինանոցը համալրել է նաև Bayraktar Akinci մարտական ԱԹՍ-ով: Թուրքիայում այս մոդելի ԱԹՍ-ները օգտագործում են, հատկապես, երկրի Ազգային հետախուզական կազմակերպությունը (MİT) և զինված ուժերի տարբեր ստորաբաժանումները: Այս մոդելի առաջին ԱԹՍ-ն արդեն հասցվել է Պակիստան, իսկ մնացած՝ 7-ը նախատեսվում է մատակարարել առաջիկա տարիներին²³:

Բացի վերոգրյալ երկու մոդելներից Պակիստանի ռազմական ուժերի տրամադրության տակ է գտնվում նաև Bayraktar TB3 մոդելի ԱԹՍ, որի թվաքանակի վերաբերյալ տեղեկություններ չեն հաղորդվում: Պակիստանը թուրքական *Baykar-ից* գնել է նաև 2023 թ.-ից արտադրվող Kemankeş թևավոր հրթիռներ, որոնք կարող են արձակվել գնված ԱԹՍ-ներից: Այս հրթիռը կառավարվում է արհեստական բանականությամբ, որը թույլ է տալիս ինքնուրույն գտնել և ընտրել թիրախներ նույնիսկ վատ եղանակային պայմաններում²⁴:

բ) ԱԹՍ-ների բաղադրիչների համատեղ արտադրություն: 2021 թ. օգոստոսին Պաշտպանական արդյունաբերության 15-րդ միջազգային ցուցահանդեսում Թուրքիայի օդատիեզերական արդյունաբերությունը (TAI) և Պակիստանի ճարտարագիտության և գիտության ազգային հանձնաժողովը (NESCOM) պայմանագիր են ստորագրել «Անօդաչու թռչող սարքերի» վերաբերյալ: Նախատեսվում է համատեղ արտադրել բաղադրիչներ և մշակել տեխնոլոգիաներ՝ թուրքական արտադրության ANKA անօդաչու թռչող սարքի համար: Պայմանագրի դրույթների համաձայն՝ TAI-ն և NESCOM-ը համատեղ պատասխանատվություն են կրելու ռեսուրսների և տեխնոլոգիաների փոխանցման համար²⁵:

գ) ԱԹՍ-ներին առնչվող տեխնոլոգիաների հետազոտություն: Պակիստանի Ազգային օդատիեզերական գիտության և տեխնոլոգիական պարկը (NASTP), որը

²³ Game of Drones: Pakistani pilots operating Turkish-made Akinci UCAVs get shiny new patch. (03.04.2023). <https://www.yenisafak.com/en/technology/game-of-drones-pakistani-pilots-operating-turkish-made-akinci-ucavs-get-shiny-new-patch-3663034> (բեռնման օրը՝ 16.07.2024).

²⁴ Adem Kiliç. Pakistan Today: KAAN, savaş uçağı endüstrisinde devrim yaratacak. (28.08.2023). <https://gdh.digital/pakistan-today-kaan-savas-ucagi-endustrisinde-devrim-yaratacak-76609> (բեռնման օրը՝ 16.07.2024).

²⁵ Yusuf Çetiner. TAI and NESCOM Sign A Contract For The Modernization Of Anka UAVs. (23.08.2021). <https://www.overtdefense.com/2021/08/23/tai-and-nescom-sign-a-contract-for-the-modernization-of-anka-uavs/> (բեռնման օրը՝ 15.07.2024).

բացվել է 2023 թ. օգոստոսին, համագործակցության համաձայնագիր է կնքել թուրքական ԱԹՍ-ների արտադրող *Baykar* ընկերության հետ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական (R&D) աշխատանքների համար: *Baykar*-ը նպատակ ունի այս գործընկերության միջոցով խորացնել իր համագործակցությունը Պակիստանի հետ, նպաստել այդ երկրի օդատիեզերական և պաշտպանական արդյունաբերական էկոհամակարգի զարգացմանը: Համաձայնագիրը պաշտոնականացվել է բացման արարողության ժամանակ, որին մասնակցել են *Baykar*-ի խորհրդի նախագահ Սելչուք Բայրաքթարը և Պակիստանի վարչապետ Շահբազ Շարիֆը²⁶: Այս համագործակցության արդյունքներից մեկը KaGem V3 անվանումով՝ օդից արձակվող հրթիռի մշակումն է, որն իրագործվել է *NASTP*-ի և *Baykar*-ի հետ համատեղ²⁷:

2. ՌԱԶՄԱԾՈՎԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Պակիստանի նավատորմի պաշտպանական հզորության բարձրացման նպատակով՝ Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության ոլորտում գործող մի շարք առաջատար ընկերություններ վերջին տասնամյակում երկկողմ պայմանագրերի շրջանակներում համագործակցում են նաև այդ երկրի ռազմածովային ուժերի հետ, հիմնականում հետևյալ ասպարեզներում՝ **ա) սուզանավերի արդիականացում, ռազմական նշանակության նավերի նախագծերի մշակում և արտադրություն, բ) թուրքական արտադրության ռազմանավերի վաճառք:**

ա) Agosta 90-B/ PNS/M KHALID (S-137)/ PNS/M HAMZA (S-139) դասի սուզանավերի արդիականացման նախագիծը և ռազմական նշանակության բեռնանավերի նախագծերի մշակումը: Պակիստանի ՌԾՈՒ-ի հետ այս ոլորտում համագործակցությունը սկսվել է դեռևս 2016 թ., երբ Կարաչիում ռազմական բեռնատար նավերի արդիականացման նպատակով Թուրքիայից Պակիստան

²⁶ Baykar subsidiary to conduct R&D studies at Pakistan's NASTP. (07.08.2023). <https://baykartech.com/en/press/baykar-subsiary-to-conduct-rd-studies-at-pakistans-nastp/> (բեռնման օրը՝ 16.07.2024).

²⁷ International Defence Analysis. (17.05.2024). https://x.com/Defence_IDA/status/1791489443099980123 (բեռնման օրը՝ 16.07.2024).

գործուղվեց մասնագետների մի խումբ, որոնք պակիստանցի գործընկերների համագործակցությամբ իրագործեցին մի շարք նախագծեր: Նույն տարում, Պակիստանի սուզանավերի արդիականացման մրցույթում հաղթած Թուրքիայի Պաշտպանական տեխնոլոգիաների նախագծման ընկերությունը (STM) հանձն առավ արդիականացնել ֆրանսիական արտադրության Agosta 90-B դասի սուզանավերը, որի համար կնքվեց «Փոխըմբռնման հուշագիր»:

Առաջին սուզանավը՝ PNS/M HAMZA (S-139)-ն, առաքվել է Պակիստանի ռազմածովային ուժերի հրամանատարությանը 2021 թ., իսկ երկրորդ սուզանավը՝ PNS/M KHALID (S-137)-ը 2023 թ.²⁸: Սուզանավերի ֆրանսիական համակարգերն ամբողջությամբ փոխարինվել են թուրքական HAVELSAN ընկերության արտադրած ADVENT SYS (ցանցային տվյալների աջակցությամբ՝ մարտական գործողությունների կառավարման ինտեգրված համակարգ²⁹) ծրագրային ապահովմամբ: Մինչույն ժամանակ, իրականացվել է կրիտիկական համակարգերի համապարփակ արդիականացում, ներառյալ՝ տեղեկատվության բաշխման, հրամանատարության կառավարման, սուզանավերի ռադիոտեղորոշման և էլեկտրոնային աջակցման համակարգերում³⁰: Ծրագրի շրջանակներում արտահանվել են նաև ASELSAN և HAVELSAN թուրքական ընկերությունների կողմից մշակած տեխնոլոգիաներ, ինչպես նաև՝ որոշ էլեկտրոնային համակարգեր³¹:

Բացի այդ, STM-ը նախագծել է նաև Կարաչիում արտադրված մոտ 17 հազար տոննա կշռող ծովային տանկերը (PNS Moawin)³², իսկ նավի կառուցման ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրով թուրքական ASELSAN-ը ստանձնել է նավի պաշտպանության համար՝ 25 մմ տրամաչափի հեռակառավարվող կայունացված

²⁸ STM Delivers Second Pakistan Navy Agosta 90B Project Submarine. (23.01.2023). <https://seawaves.com/stm-delivers-second-pakistan-navy-agosta-90b-project-submarine/> (բեռնման օրը՝ 16.07.2024).

²⁹ SEDA'dan tam isabet. 2022. Havelsan Dergi, Sayi:13-14 (3). s. 77, <https://www.havelsan.com.tr/kurumsal/medya-merkezi/havelsan-dergi#7865> (բեռնման օրը՝ 16.07.2024).

³⁰ STM Delivers Second Pakistan Navy Agosta 90B Project Submarine. (23.01.2023). <https://seawaves.com/stm-delivers-second-pakistan-navy-agosta-90b-project-submarine/> (բեռնման օրը՝ 16.07.2024).

³¹ Pakistan denizaltıları Türkiye'ye emanet. (28.02.2018). <https://www.aa.com.tr/tr/ekonomi/pakistan-denizaltıları-türkiyeye-emanet/1075725> (բեռնման օրը՝ 13.07.2024).

³² Pakistan Navy Fleet Tanker PNS Moawin is in the Indian Ocean. (28.06.2018). <https://www.defenceturkey.com/en/content/pakistan-navy-fleet-tanker-pns-moawin-is-in-the-indian-ocean-3046> (բեռնման օրը՝ 13.07.2024).

հրետանային համակարգերի տեղադրման և մարտավարական գործողությունների համար՝ կապի կողավորման համակարգի տրամադրման պարտականություններ³³: Այս նախագիծը կյանքի է կոչվել թուրքերի հետ համագործակցությամբ աշխատող Պակիստանի թիմի կողմից: Այն, Պակիստանի ռազմածովային նավատորմում առկա ամենամեծ ռազմանավն է, որը շահագործվում է 2018 թվականից:

բ) Թուրքական PN MILGEM /Babur/ դասի կորվետների գործարքը: 2018 թ. Պակիստանի ռազմածովային ուժերը պայմանագիր կնքեցին թուրքական ASFAT ռազմարդյունաբերական ընկերության հետ՝ MILGEM (Babur) տեսակի չորս ռազմանավ (կորվետ) գնելու համար: Հիմնական շարժիչ համակարգերը, որոնք կազմում են նավերի ամենակարևոր պլատֆորմային համակարգերը և ապահովում են նավերի շարժը՝ իրականացնելու է Պաշտպանական տեխնոլոգիաների նախագծման ընկերությունը (STM), իսկ ASFAT-ը՝ հիմնական շարժիչ համակարգի մատակարարման և ինտեգրման ինժեներական լուծումները³⁴: Ընդ որում, թուրքական կողմը հայտարարել է, որ այն «*Թուրքիայի ամենամեծ պաշտպանական արտահանումն է՝ ամրագրված մեկ համաձայնագրում*»: Պայմանագրի համաձայն՝ նավերից երկուսը կարտադրվեն Ստամբուլում, մյուս երկուսը՝ Կարաչիում: Գործարքը ներառում է նաև տեխնոլոգիայի փոխանցում:

2023 թ. սեպտեմբերին Թուրքիայի պաշտպանության նախարարությանը կից պաշտպանական կապալառուն՝ ASFAT-ը, Ստամբուլի ռազմածովային նավաշինարանում հանդիսավոր կերպով Պակիստանի ռազմածովային ուժերին է հանձնել առաջին կորվետը: Նախատեսվում է մյուս նավերը մատակարարել մինչև 2024 թվականի ավարտը³⁵: Ինչ վերաբերում է գնված նոր ռազմանավերին, ապա դրանք տեղակայվելու են Task Force-88-ի շրջանակներում՝ ծովից եկող սպառնալիքներից պաշտպանելու համար:

³³ Պակիստանի ՌԾՈւ նավը համալրվելու է թուրքական պաշտպանական համակարգով, (21.07.2015). <https://razm.info/67876> (բեռնման օրը՝ 13.07.2024):

³⁴ En büyük savunma ihracatı... İmzalar atıldı!. (22.06.2020). <https://www.hurriyet.com.tr/ekonomi/en-buyuk-savunma-ihracati-imzalar-atildi-41547475> (բեռնման օրը՝ 14.07.2024).

³⁵ Tayfun Ozberk. Turkiye Delivers Corvette to Pakistan, Launches 2 OPVs For Turkish Navy. (23.09.2023). <https://www.navalnews.com/naval-news/2023/09/turkiye-delivers-corvette-to-pakistan-launches-2-opvs-for-turkish-navy/> (բեռնման օրը՝ 14.07.2024).

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՑԱՄԱՔԱՅԻՆ, ԱՎԻԱՑԻՈՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՀՐԹԻՌԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

AselPOD էլեկտրասպրիկական թիրախավորման համակարգ: Թուրքական ASELSAN ընկերությունը 2016 թ. հունիսին 25 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ նախնական պայմանագիր կնքեց Պակիստանի հետ՝ 16 հատ ավիացիոն նշանակության AselPOD՝ թիրախային պատյաններ (*Targeting pods*) մատակարարելու համար: Երկրորդ պայմանագիրը կնքվեց 2017 թ. մայիսին, այս անգամ ASELSAN-ը 24 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ AselPOD-ին առնչվող տեխնիկական մասեր պետք է առաքի Պակիստան: Պայմանագրի շրջանակներում ձեռք բերված AselPOD-ները մատակարարվել են 2017 թ. սկզբին և արդեն 2018 թ. համարկվել են Պակիստանի ռազմաօդային ուժերին պատկանող JF-17 Thunder ինքնաթիռներին: Ծրագրային ապահովման վրա հիմնված որոշակի պահանջվող թարմացումներ նույնպես իրականացվել են ASELSAN-ի աջակցությամբ^{36,37}: Ավելորդ չէ նշել, որ վերջին տարիներին պակիստանյան փորձից ոգևորված Իրաքի և Նիգերիայի ռազմաօդային ուժերը նույնպես համարկել են իրենց կործանիչները AselPOD-ով:

ACMIpod (Air Combat Maneuvering Instrumentation) և TDLSim (Tactical Data Link Simulator) համակարգեր: ACMIpod-ը, սիմուլյացիոն համակարգ է, որը օդաչուներին թույլ է տալիս մարզվել ինչպես մարտավարական մանևրների, այնպես էլ՝ մարտական գործողությունների ժամանակ: Այն մշակվել է թուրքական Տիեզերական և պաշտպանական տեխնոլոգիաներ (թուրքերեն հապավումը՝ SDT) ընկերության կողմից և սկսած 2014 թ.-ից օգտագործվում է Թուրքիայի ռազմաօդային ուժերի կողմից, ինչպես նաև արտահանվում է այլ երկրներ: Այս առումով Պակիստանը ևս բացառություն չէ:

SDT-ն, որն էլեկտրոնային պատերազմի և կապի, ուսուցման համակարգերի ոլորտներում արտադրանք թողարկող առաջատար ընկերություններից է, 2022 թ.

³⁶ AselPOD Elektro-Optik Keşif, Gözetleme ve Hedefleme Sistemine Bakış!. (15.09.2020). <https://www.defenceturkey.com/tr/icerik/aselpod-elektro-optik-kesif-gozetleme-ve-hedefleme-sistemine-bakis-4204> (բեռնման օրը՝ 14.07.2024).

³⁷ Last Delivery of ASELPD as New Turkish Targeting Pod Enters Development. (26.12.2023). https://www.defensemirror.com/news/35707/Last_Delivery_of_ASELPD_as_New_Turkish_Targeting_Pod_Enters_Development (բեռնման օրը՝ 14.07.2024).

Նոյեմբերին պայմանագիր կնքեց Պակիստանի ռազմաօդային ուժերի հետ՝ մշակելու այնպիսի համակարգեր, որոնք կապահովեն օդաչուներին մարտավարական մոդելավորման ուսուցման գործընթացը: Այս պայմանագրի կնքման արարողությունը տեղի է ունեցել Պակիստանի Կարաչի քաղաքում անցկացվող «IDEAS 2022» (*International Defence Exhibition and Seminar*) միջազգային ցուցահանդեսի ժամանակ: Պայմանագրի համաձայն՝ SDT-ն Պակիստանի ռազմաօդային ուժերի համար կմշակի ACMIpod մոդելավորման համակարգը, որը համարկվելու է երկրի ռազմաօդային ուժերի JF-17 ինքնաթիռներին: Քանի որ Իսլամաբադի համար նախատեսված պայմանագիրը մոտենում է ավարտին, 2024 թ. հուլիսի 11-ին Պակիստանի զինված ուժերի բրիգադային գեներալ Իմրան Նուրը և նրան ուղեկցող պատվիրակությունն այցելել են SDT և ընկերության ղեկավարության հետ քննարկվել ապագա համագործակցության հնարավորությունները³⁸: Դեռևս հայտնի չէ, թե այդ հանդիպումների ընթացքում ինչ պայմանավորվածություններ են ձեռք բերվել:

TDLSim ծրագիրը մշակվել է պաշտպանական արդյունաբերության ոլորտում գործող թուրքական *MilSOFT* (Software Technologies) ընկերության կողմից, որը ծրագրային ապահովման մշակման ոլորտում գործունեություն ծավալող ընկերություն է: *TDLSim*-ը (Tactical Data Link Simulator)՝ մոդելավորման, փորձարկման և ուսուցման ծրագրակազմ է, որը մշակվել է մարտավարական տվյալների միացման համար: Այն օգտագործվում է տեղեկատվության անվտանգ փոխանակումն ապահովելու համար, կարող է կատարել հրամանատարության և կառավարման համակարգի առաջադրանքը, որը պատվիրում է F16/F-35 ինքնաթիռը՝ արձակելով իր հրթիռն ու ուղղել այն դեպի թիրախ՝ իրական և վիրտուալ միջավայրերում: Որոշ գնահատակներով այս ծրագիրը վերջերս հաջողությամբ փորձարկվել է ՆԱՏՕ-ի զորավարություններում: *TDLSim*-ը օգտագործվում է Թուրքիայի ցամաքային/ռազմաօդային ուժերի, Ադրբեջանի ռազմաօդային ուժերի և Պակիստանի զինված ուժերի կողմից³⁹:

³⁸ Pakistan Silahlı Kuvvetleri Ataşesi'nden SDT'ye ziyaret. (10.07.2024). <https://www.defensehere.com/tr/pakistan-silahlı-kuvvetleri-ataşesinden-sdtye-ziyaret> (բեռնման օրը՝ 16.07.2024).

³⁹ F-16/F-35'lere talimat milli teknolojiden! (02.07.2024). <https://www.yirmidort.tv/teknoloji/f-16f-35lere-talimat-milli-teknolojiden-187735> (բեռնման օրը՝ 16.07.2024).

Թուրքիան և Պակիստանն օրեցօր մեծացնում են համագործակցությունը *հրթիռաշինության ոլորտում*: Նախքան երկկողմ հարաբերություններում այս ոլորտում համագործակցության առանձնահատկություններին անրադառնալը, ներկայացնենք Պակիստանի հրթիռային զինանոցը: Ինչպես հայտնի է, Իսլամաբադը տարեցտարի ընդլայնել է միջուկային մարտազլխիկներով բալիստիկ հրթիռների (կարճ ու միջին հեռահարության) իր զինանոցը: Կարճ հեռահարության, շարժական հարթակներից արձակվող բալիստիկ հրթիռներ են *Abdali* (Hatf-2, 200 կմ), *Ghaznavi* (Hatf-3, 300 կմ), *Shaheen-I* (Hatf-4, 750 կմ) և *Nasr* (Hatf-9, 60-70 կմ), *Shaheen-IA* (Hatf-4, 900 կմ) հրթիռը: Պակիստանի զինանոցում առկա է նաև միջին հեռահարության բալիստիկ հրթիռների երկու տեսակ՝ *Ghauri*-ն (Hatf-5), որի հեռահարությունը 1250 կմ է և *Shaheen-II*-ը (Hatf-6)-ը՝ 2000 կմ հեռահարությամբ⁴⁰, ինչպես նաև՝ 2750 կմ հեռահարությամբ *Shaheen-III*-ը: Վերջինս Պակիստանի զինանոցում առկա ամենաերկար հեռահարության հրթիռն է, որը կարող է կրել միջուկային և սովորական մարտազլխիկներ⁴¹:

Պայմանավորված հրթիռաշինության ոլորտում ունեցած հաջողություններով՝ Անկարան ձգտում է փոխգործակցել Իսլամաբադի հետ՝ փորձելով այս հարաբերություններին հաղորդել ռազմավարական խորություն: Դեռևս 2020 թ. դեկտեմբերի վերջին Թուրքիայի և Պակիստանի զինվորականների բարձր մակարդակի հանդիպման ընթացքում էրդոդանն անձամբ դիմել էր Պակիստանի բանակի գլխավոր շտաբի հրամանատար գեներալ Ջ. Բաջվային միջուկային զենքի Պակիստանի տեխնոլոգիաների մասին տեղեկություններ տրամադրելու համար և ենթադրվում է, որ Պակիստանը սովել է իր համաձայնությունը: Միևնույն ժամանակ, ինչպես նշում են հնդկական աղբյուրները, Իսլամաբադը Անկարային է փոխանցում նաև հրթիռային տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկություններ, իսկ նրանց գիտնականներն օգնում են Թուրքիային՝ զարգացնելու հրթիռաշինության ոլորտը⁴²:

⁴⁰ Pakistani nuclear forces. 2020. P. 369-374. <https://www.sipri.org/sites/default/files/YB20%2010%20WNF.pdf> (բեռնման օրը՝ 16.07.2024). տես նաև, Արեստակես Սիմավորյան. Պակիստանի միջուկային զինանոցը. (22.02.2021). <http://surl.li/mikbat> (բեռնման օրը՝ 16.07.2024).

⁴¹ Yusuf Çetiner. Pakistan Conducts Successful Flight Test of The Shaheen-III Ballistic Missile. (11.04.2022). <https://www.overtdefense.com/2022/04/11/pakistan-conducts-successful-flight-test-of-the-shaheen-iii-ballistic-missile/> (բեռնման օրը՝ 17.07.2024).

⁴² Manish Shukla. Turkey-Pakistan in top-level discussion over nuclear weapon program. (02.01.2021). <https://zeenews.india.com/world/turkey-pakistan-in-top-level-discussion-over-nuclear-weapon-program-2333996.html> (բեռնման օրը՝ 16.07.2024).

Այս հանդիպմանը հաջորդող հետագա տարիներին, ներառյալ 2024 թ.-ին, երկու երկրները եռանդունորեն համագործակցել են հրթիռաշինության ոլորտում, որը ներառում է ինչպես հրթիռների համատեղ արտադրությունը, այնպես էլ՝ տեխնոլոգիաների փոխանակումը: Այսպես, 2024 թ. տարեսկզբին Թուրքիայի ԶՈՒ գեներալ Իրֆան Օզերթը և նրան ուղեկցող պատվիրակությունն այցելել են Պակիստան և հանդիպել այդ երկրի ռազմաօդային ուժերի հրամանատար մարշալ Զահեեր Ահմեդ Բաբեր Սիդհուին: Երկու պետությունների ռազմաօդային ուժերի համար առավելագույն օգուտ ապահովելու համար՝ պայմանավորվել են շարունակել «Օդ-օդ» հրթիռային տեխնոլոգիաների փոխանակման ծրագիրը: Փոխգործակցության առկա մակարդակն էլ ավելի ամրապնդելու նպատակով պայմանավորվել են շարունակել միջինստիտուցիոնալ համագործակցությունը՝ «պետությունից պետություն», «ընկերությունից ընկերություն» ձևաչափով⁴³:

Ինչ վերաբերում է հրթիռներին, ապա՝ ի սկզբանե թուրքական կողմը չէր բացահայտում, թե հատկապես որ տեսակի հրթիռների շուրջ է ընթացել բանակցությունները, սակայն հետագայում հայտնի դարձավ, որ համագործակցությունը ներառում է թուրքական *GÖKDOĞAN* և պակիստանյան *FAAZ-2* նախագծերի շրջանակներում արտադրված փոքր հեռահարության հրթիռներին առնչվող տեխնոլոգիաների փոխանակում երկու գործընկերների միջև: *Gökdoğan*-ը «Օդ-օդ» հրթիռ է, որը մշակվել է թուրքական *TÜBİTAK SAGE*-ի կողմից՝ որպես «Göktug օդ-օդ հրթիռների նախագծի» մաս, իսկ *FAAZ-2* հեռահար «Օդ-օդ» հրթիռը մշակվել է Պակիստանի *Global Industrial Defense Solutions (GIDS)* պետական ընկերության կողմից: Այն համարկվելու է Պակիստանի և Չինաստանի համատեղ մշակված JF-17 Thunder կործանիչի հետ⁴⁴:

Հայտնի չէ, թե արդյոք Թուրքիայի կողմից իրականացվող այլ նախագծերում ներգրավված են պակիստանցի մասնագետներ: Մասնավորապես, ընթացիկ «*Cenk*» հրթիռի նախագիծը, որ կլինի Թուրքիայի առաջին միջին հեռահարության բալիստիկ հրթիռը, իրականացվում է ծայրահեղ գաղտնիության պայմաններում: Այն, ինչպես պնդում են, ունի ավելի քան 1000 կմ հեռահարություն, և ամենևին

⁴³ Türkiye ile Pakistan ortak füze üretecek. (16.02.2024). <https://www.ekonomim.com/gundem/turkiye-ile-pakistan-ortak-fuze-uretecek-haberi-730116> (բեռնման օրը՝ 20.07.2024).

⁴⁴ Yusuf Çetiner. Turkey and Pakistan Join Forces on the Development of Air-to-Air Missiles. (19.02.2024). <https://www.overtdefense.com/2024/02/19/turkey-and-pakistan-join-forces-on-the-development-of-air-to-air-missiles/> (բեռնման օրը՝ 20.07.2024).

պետք չէ բացառել, որ միջին հեռահարության բալիստիկ հրթիռների հարցում ավելի մեծ հաջողություններ գրանցած Իսլամաբադը չօժանդակի Անկարային՝ վերջինիս խնդրանքի դեպքում:

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Ռազմատեխնիկական համագործակցությունից բացի երկու պետությունները 1970-ական թվականների վերջից փոխգործակցում են ռազմական կրթության ոլորտում: Սակայն համագործակցության առավել ակտիվ շրջան կարելի է համարել վերջին 20 տարիները: Ռազմական ուսուցման համագործակցության աշխատանքներն իրականացվում են «Պակիստանի և Թուրքիայի զինված ուժերի ուսումնական հաստատություններում պատրաստվող զինվորականների մասին» պայմանագրերի⁴⁵, «Թուրքիայի Հանրապետության և Պակիստանի Իսլամական Հանրապետության պաշտպանության նախարարությունների միջև պաշտպանական հետազոտությունների, տեխնոլոգիաների և արտադրության ոլորտներում համագործակցության մասին»⁴⁶ փոխըմբռնման հուշագրի շրջանակներում:

Մինչև 2017 թ. Թուրքիայում ուսուցում է անցել մոտ 1500 պակիստանցի զինվորական: 116 զինվորականներ մասնակցել են տարբեր կուրսերի ԹՁՈՒ-ի Գործընկերություն հանուն խաղաղության ուսումնական կենտրոնում (BIOEM) և 138-ը՝ Ահաբեկչության դեմ պայքարի գերազանցության կենտրոնում (TMMM): Պակիստանի զինվորական անձնակազմի ներկայացուցիչները տարիներ շարունակ պատրաստվել կամ վերապատրաստվել են ցամաքային նշանակության թուրքական ռազմական ակադեմիաներում: Ռազմաօդային ուժերի անձնակազմի ռազմական փոխանակման աշխատանքների շրջանակում մինչ օրս Թուրքիայում կրթություն է ստացել պակիստանցի 51 զինվորական: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա Պակիստանում 125 թուրք զինվորական մասնակցել են տարբեր դասընթացների,

⁴⁵ Türk Silahlı Kuvvetleri Eğitim Müesseselerinde Eğitim Görecek Pakistan ve Türk Askerî Personelinin Statülerinin Tayinine İlişkin Anlaşma. <https://www.resmigazete.gov.tr/eskiler/2014/10/20141003-1-1.pdf> (բեռնման օրը՝ 20.07.2024). Türkiye Cumhuriyeti Hükûmeti ile Pakistan İslam Cumhuriyeti Hükûmeti Arasında Askerî İş Birliği Anlaşması. <https://goo.su/Rcwe> (բեռնման օրը՝ 20.07.2024).

⁴⁶ Türkiye Cumhuriyeti Millî Savunma Bakanlığı ve Pakistan İslâm Cumhuriyeti Hükûmeti Savunma Üretim Bakanlığı Arasında Savunma Araştırma, Teknoloji ve Üretim Alanlarında İş Birliği Konulu Mutabakat Muhtırası. (2004). <https://www.resmigazete.gov.tr/eskiler/2005/02/20050211-1.htm> (բեռնման օրը՝ 20.07.2024).

որոնք անց են կացվել Պակիստանի ռազմական ակադեմիաներում և երկրի Ազգային պաշտպանության ակադեմիայում: Ռազմաօդային ուժերի անձնակազմի փոխանակման աշխատանքների շրջանակներում Պակիստանում կրթություն է ստացել 47 թուրք զինվորական: Ռազմական կործանիչների տեխնիկական սպասարկման թուրք աշխատակիցները նաև շարունակում են իրենց կրթական պարտականությունները կատարել Պակիստանում⁴⁷:

5. ԹՈՒՐՔԻԱ-ՊԱԿԻՍՏԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԵՎ ԲԱԶՄԱԶԳ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

CINNAH/ATATÜRK ցամաքային զորավարությունները: Երկու երկրները 1998 թ.-ից ի վեր պարբերաբար անց են կացնում երկշաբաթյա համատեղ ռազմական զորավարություններ, որոնք ներառում են «մարտավարական զորավարություններից և հակաառաջակցական գործողություններից մինչև հումանիտար առաքելություններ, արտակարգ իրավիճակների համապետ արձագանքում»: Մեկ տարի հյուրընկալում է Թուրքիան, իսկ մյուս տարի՝ Պակիստանը: Զորավարությունները կոչվում են CINNAH՝ Թուրքիայում անցկացվելու դեպքում և ATATÜRK, եթե դրանց անցկացման վայրը Պակիստանն է: Հիմնականում ներգրավված են լինում հատուկ նշանակության ուժերի բարձրագույն սպայական կազմի 100-ից ավելի զինվորական: Այն ներառում է տարբեր սցենարներ, ինչպիսիք են՝ հակաառաջակցական գործողությունները և մարտական խնդիրների կատարումը բարդ աշխարհագրական (լեռնային) պայմաններում: Զորավարությունների ընթացքում կիրառվում են առաջադեմ տեխնոլոգիաներ և մարտական տեխնիկա: Վերջին նման զորավարությունն անց է կացվել 2024 թ. մարտի 3-16-ը՝ Թուրքիայում⁴⁸:

AYYILDIZ և TURGUTREİS ծովային համապետ զորավարությունները: AYYILDIZ զորավարությունը ամեն տարի հերթափոխով անցկացվում են Թուրքիայի և Պակիստանի կողմից: Մինչ այսօր իրականացվել է 15 նման վարժանք՝

⁴⁷ Ömür Çelikdönmez. Türk İstihbarati, darbe öncesi Pakistan’da kimlerle temas kurdu?. (17.04.2022). <https://www.dikgazete.com/yazi/turk-istihbarati-darbe-oncesi-pakistan-da-kimlerle-temas-kurdu-4431.html> (բեռնման օրը՝ 20.07.2024).

⁴⁸ CİNNAH-2024 Tatbikati Basın Duyurusu. (05.03.2024). <https://www.msb.gov.tr/Basin-ve-Yayin/Aciklamalar/54c8bad1bcff40108f62a35c015f8f83> (բեռնման օրը՝ 20.07.2024).

սահմանափակ ռազմածովային հատուկ գործողություններով: Վերջին զորավարությունը իրականացվել է 2023 թ. նոյեմբերին Ստամբուլում՝ Թուրքիայի ռազմածովային ուժերի ստորջրյա հարձակման (SAT) և Պակիստանի ռազմածովային ուժերի «Իքբալ» խմբերի մասնակցությամբ⁴⁹:

Ինչ վերաբերում է *TURGUTREİS* կոչվող զորավարությանը, այն Պակիստանի և Թուրքիայի միակ համատեղ ռազմածովային զորավարություններն են, որոնք տեղի են ունենում երկու տարբեր օվկիանոսներում՝ Հնդկականում (Հյուսիսային Արաբական ծովում) և Ատլանտյանում (Միջերկրական ծովում): Կախված զորավարությունների սցենարներից վարժանքները ուղեկցվում են գրոհային հաժանավերով, ֆրեգատներով և սուզանավերով⁵⁰:

Պակիստանի ռազմածովային ուժերը 2012 թ.-ից մասնակցում էին նաև Թուրքիայի ռազմածովային ուժերի *Mavi Balina* (Կապույտ կետ)՝ Արևելյան Միջերկրական ծովում հակասուզանավային պատերազմի զորավարժանքներին, ներառյալ *Doğu Akdeniz* (Արևելյան Միջերկրական ծով) զորավարություններին⁵¹: Նմանապես, Թուրքիայի ռազմածովային ուժերը՝ 2007 թ.-ից ի վեր Պակիստանի ռազմածովային ուժերի «Աման» զորավարությունների մասնակիցներից է⁵²:

Թուրքիա-Պակիստան ռազմական փոխգործակցությունը ընթանում է նաև միջազգային մակարդակով՝ ***Anadolu Kartali (Անադոլիական արծիվ)*** զորավարությունների շրջանակում, որոնք ամեն տարի կազմակերպվում են Կոնիայի ուսումնական կենտրոնում՝ օդաչուների և հակաօդային պաշտպանության անձնակազմի համար, նպատակ ունենալով՝ բարելավել նրանց պատրաստվածության մակարդակը համակցված գործողությունների միջոցով: Երբեմն դրանց մասնակցում են նաև ռազմածովային ուժերի անձնակազմերը: Զորավարությունների նպատակն է նվազագույնի հասցնել զոհերը և

⁴⁹ İstanbul'da Ayyıldız-2023 Tatbikati gerçekleştirildi. (26.11.2023). <https://hibya.com/istanbulda-ayyildiz2023-tatbikati-gerceklestirildi-227262> (բեռնման օրը՝ 20.07.2024).

⁵⁰ Doğu Akdeniz'de Gerçekleştirilen TURGUTREİS-9 Tatbikati. (12.26.2024). <https://www.gundem03.com/haber/20256/dogu-akdeniz-de-gerceklestirilen-turgutreis-tatbikati.html> (բեռնման օրը՝ 20.07.2024).

⁵¹ Pakistan Navy Ship to Participate in Naval Exercise in Turkey. 2012. https://www.pakembassyankara.com/pakistan-navy-ship-to-participate-in-naval-exercise-in-turkey_4-171 (բեռնման օրը՝ 20.07.2024).

⁵² AMAN 2023 Davet Tatbikatının Resmi Açılış Töreni Bugün Yapılıyor. (10.02.2023). <https://www.defenceturkey.com/tr/icerik/aman-2023-davet-tatbikatının-resmi-acilis-toreni-bugun-yapiliyor-5381> (բեռնման օրը՝ 20.07.2024).

առավելագույնի հասցնել առաքելության արդյունավետությունը իրական մարտական պայմաններում: Ուստի՝ դրանք անցկացվում են հնարավորինս իրատեսական ռազմական միջավայրում՝ օգտագործելով *Կարմիր* (թշնամի) և *Կապույտ* (բարեկամ) ուժերի միջև սցենարը: Պակիստանն այս զորավարություններին ընդհատումներով մասնակցում է սկսած 2004 թ.-ից⁵³, վերջին անգամ՝ 2023 թ.-ին, երբ զորավարություններն ընթանում էին ԱդրՀ-ի, ԱՄԷ-ի, Մեծ Բրիտանիայի, Կատարի, ՆԱՏՕ-ի և Թուրքիայի ռազմաօդային/ռազմածովային ուժերի մասնակցությամբ⁵⁴:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով, կարելի է արձանագրել, որ Թուրքիան զենքի արտաքին նոր շուկաներ նվաճելու նպատակով ձգտում է միջազգային մակարդակով զարգացնել փոխգործակցությունը ռազմարդյունաբերության ոլորտում, այդ թվում՝ ասիական երկրներում: Վերջին տարիներին Չինաստանից հետո Թուրքիան՝ Պակիստանին սպառազինություն մատակարարող երկրորդ խոշոր երկիրն է: Այս առումով Թուրքիան և Պակիստանը կարևոր են միմյանց համար և նրանց փոխգործակցությունը նոր հնարավորությունների պատուհան է բացում, բայց և առկա են մարտահրավերներ: Մասնավորապես՝

1. Երկկողմ գործարքները մի կողմից ուժեղացնում են Պակիստանի ռազմական կարողությունները, մյուս կողմից՝ բոլոր տեսակի նշանակության պաշտպանական արդյունաբերության ոլորտում գործող թուրքական կազմակերպությունների համար բացվում է արտահանման տեսանկյունից արժեքավոր նոր շուկա, ինչը կարող է էապես նպաստել սպառազինություն արտահանող թուրքական ընկերությունների տնտեսական և տեխնոլոգիական աճին:

2. Ռազմական տեխնոլոգիաների ոլորտում ընթացող համագործակցությունը, համատեղ հետազոտություններին ուղղված ջանքերը հեռանկարում կարող են տարածվել նաև առաջադեմ տեխնոլոգիաների վրա, ինչպիսիք են՝ արհեստական բանականությունը, կիրբերանվտանգությունը և սպառազինություններում կիրառվող թվային նշանակության ծրագրային համակարգերը:

⁵³ «Անատոլիական արժիվ» զորավարությունների անցկացման պաշտոնական կայք. <https://www.anadolukartali.tsk.tr/Custom/AnadoluKartali/121> (բեռնման օրը՝ 20.07.2024):

⁵⁴ Uluslararası Anadolu Kartali-2023 Eğitimi Basin Duyurusu. (04.05.2023). <https://www.msb.gov.tr/Basin-ve-Yayin/Aciklamalar/53db670f439c40a6856cd0d9b4acfa16> (բեռնման օրը՝ 21.07.2024).

3. Թեև ներկայումս Պակիստանի տեխնոպարկում գործում են մեկ-երկու սպառազինություն արտադրող թուրքական ընկերությունների գրասենյակներ, որոնք տեղացի գործընկերների հետ համատեղ որոշ սպառազինությունների բաղադրամասեր են արտադրում, մինչդեռ համատեղ ռազմարդյունաբերական ձեռնարկություններ չեն ստեղծվել: Ենթադրում ենք, որ հեռանկարում այդ հարցը առաջ է գալու և, հավանաբար, որպես առաջնահերթություն կընտրվի ռազմական ավիացիայի, ներառյալ՝ ԱԹՍ-ների ոլորտը: Մյուս կողմից՝ հնարավոր է, որ երկու երկրներն ապագայում տիեզերական տեխնոլոգիաների, մասնավորապես, արբանյակային ծրագրերի ոլորտում համագործակցության հիմքեր գցեն: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ և՛ Թուրքիան, և՛ Պակիստանը կանգնած են տնտեսական լրջագույն մարտահրավերների առջև: Դա կարող է էապես ազդել թե՛ գործող, և թե՛ ապագային միտված համատեղ պաշտպանական ծրագրերում ֆինանսական մեծ ներդրումներ կատարելու նրանց կարողությունների վրա՝ սահմանափակելով ռազմատեխնիկական համագործակցության շրջանակն ու մասշտաբը:

4. Որքան էլ Անկարան ձգտում է սպառազինությունների արտադրման ոլորտում ներկայանալ որպես ինքնաբավ երկիր, նա, դեռևս, կախվածություն ունի արտասահմանյան տեխնոլոգիաներից և անգամ հումքի որոշ տեսակներից: Ակնհայտ է, որ Պակիստանի հետ պաշտպանական ոլորտում ունեցած հարաբերությունները միտված են նաև սեփական տեխնոլոգիաների զարգացմանը, ուստի Անկարան ձգտում է իր համար հասանելի դարձնել չինականը, որից մասամբ օգտվում է Իսլամաբադը: Պեկինի դիրքորոշումը կարող է միանշանակ չլինել այս հարցում: Ինչպես որ ԱՄՆ-ն է արտահանման վերահսկողության և երկկողմ պայմանավորվածությունների շրջանակում արգելում Անկարային տեխնոլոգիաներ և սպառազինության որոշ տեսակների բաղադրամասեր հասանելի դարձնել Պակիստանի համար, այնպես էլ՝ Պեկինը կարող է արգելել Իսլամաբադին չինական արտադրության տեխնոլոգիաների փոխանցումը, հատկապես, որ ներկայումս Պակիստանին սպառազինությունների վաճառման տեսանկյունից Անկարան մնում է Պեկինի գլխավոր մրցակիցը: Հաշվի առնելով, որ Պակիստանը տարիներ շարունակ ենթարկվում է ամերիկյան էմբարգոյի և պատժամիջոցների, ռազմատեխնիկական ոլորտում Չինաստանի հետ ունեցած սերտ հարաբերությունները (օրինակ՝ բազմաֆուկցիոնալ ռեակտիվ ինքնաթիռների և տանկերի համատեղ

արտադրության կազմակերպումը), ինչպես նաև Պակիստան-Հնդկաստան ավանդական մրցակցությունը, քիչ հավանական է դարձնում Պեկինի դեմ դուրս գալու հնարավորությունը: Հակառակ պարագայում՝ ստիպված կլինի որոշ կրիտիկական նշանակության տեխնոլոգիաներ զարգացնել երկրի ներսում՝ հիմնվելով բացառապես սեփական միջոցների և հնարավորությունների վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

1. Արեստակես Սիմավորյան. Պակիստանի միջուկային զինանոցը. (22.02.2021). Օրբելի կենտրոն, <http://surl.li/mikbat>
2. «Անատոլիական արծիվ» զորավարժությունների անցկացման պաշտոնական կայք. <https://www.anadolukartali.tsk.tr/Custom/AnadoluKartali/121>
3. Պակիստանի ՌԾՈւ նավը համալրվելու է թուրքական պաշտպանական համակարգով, (21.07.2015). <https://razm.info/67876>
4. Aamir Shah. Pakistan, Turkey to improve defense ties. (06.02.2002). <https://www.upi.com/Defense-News/2002/02/06/Pakistan-Turkey-to-improve-defense-ies/64031013029039/>
5. Adem Kılıç. Pakistan Today: KAAAN, savaş uçağı endüstrisinde devrim yaratacak. (28.08.2023). <https://gdh.digital/pakistan-today-kaan-savas-ucagi-endustrisinde-devrim-yaratacak-76609>
6. Ashish Dangwal. Bankrupt Pakistan ‘Burdens’ 5th-Gen TFX-Kaan Fighter Program; Lacks Financial, Tech Muscle to Aid Turkey. (05.09.2023). <https://www.eurasiantimes.com/kaan-fighter-jet-turkey-could-partner-pakistan/>
7. Anwar Iqbal. US blocks delivery of Turkish gunships to Pakistan. (10.03.2021). <https://www.dawn.com/news/1611685>
8. Ayşe Betül Bal. Pakistan cancels Turkish chopper deal amid US license deadlock. (06.01.2022). <https://www.dailysabah.com/business/defense/pakistan-cancels-turkish-chopper-deal-amid-us-license-deadlock>
9. Bilal Khan. Turkish Aerospace Opens Office in Pakistan. (06.01.2020). <https://quwa.org/daily-news/turkish-aerospace-opens-office-in-pakistan/>
10. Baykar subsidiary to conduct R&D studies at Pakistan’s NASTP. (07.08.2023). <https://baykartech.com/en/press/baykar-subsiadiary-to-conduct-rd-studies-at-pakistans-nastp/>
11. Franz-Stefan Gady. Pakistan to Sell 52 Military Aircraft to Turkey. (12.05.2017). <https://thedi diplomat.com/2017/05/pakistan-to-sell-52-military-aircraft-to-turkey/>
12. Game of Drones: Pakistani pilots operating Turkish-made Akıncı UCAVs get shiny new patch. (03.04.2023). <https://www.yenisafak.com/en/technology/game-of-drones-pakistani-pilots-operating-turkish-made-akinci-ucavs-get-shiny-new-patch-3663034>
13. International Defence Analysis. (17.05.2024). https://x.com/Defence_IDA/status/1791489443099980123

14. Last Delivery of ASELPOD as New Turkish Targeting Pod Enters Development. (26.12.2023). https://www.defensemirror.com/news/35707/Last_Delivery_of_ASELPOD_as_New_Turkish_Targeting_Pod_Enters_Development
15. Manish Shukla. Turkey-Pakistan in top-level discussion over nuclear weapon program. (02.01.2021). <https://zeenews.india.com/world/turkey-pakistan-in-top-level-discussion-over-nuclear-weapon-program-2333996.html>
16. Nazia Sheikh. The new era of Pakistan-Turkey Defence ties. (25.08.2023). <https://www.pakistan-today.com.pk/2023/08/25/the-new-era-of-pakistan-turkey-defence-ties/>
17. Pakistan Eyes Surplus Turkish F-16s to Bolster Air Force. (13.07.2024). <https://idrw.org/pakistan-eyes-surplus-turkish-f-16s-to-bolster-air-force/>
18. Pakistan Navy Fleet Tanker PNS Moawin is in the Indian Ocean. (28.06.2018). <https://www.defence-turkey.com/en/content/pakistan-navy-fleet-tanker-pns-moawin-is-in-the-indian-ocean-3046>
19. Pakistani nuclear forces. 2020. pp. 369. <https://www.sipri.org/sites/default/files/YB20%2010%20WNF.pdf>
20. Pakistan Navy Ship to Participate in Naval Exercise in Turkey. 2012. https://www.pakembassyankara.com/pakistan-navy-ship-to-participate-in-naval-exercise-in-turkey_4-171
21. STM Delivers Second Pakistan Navy Agosta 90B Project Submarine. (23.01.2023). <https://seawaves.com/stm-delivers-second-pakistan-navy-agosta-90b-project-submarine/>
22. Tayfun Ozberk. Turkiye Delivers Corvette to Pakistan, Launches 2 OPVs For Turkish Navy. (23.09.2023). <https://www.navalnews.com/naval-news/2023/09/turkiye-delivers-corvette-to-pakistan-launches-2-opvs-for-turkish-navy/>
23. TAI completes upgraded F-16 deliveries to Pakistan Air Force. (03.09.2014). <https://www.airforce-technology.com/news/newstai-completes-upgraded-f-16-deliveries-to-pakistan-air-force-4362074/>
24. Yusuf Çetiner. TAI and NESCOM Sign a Contract for the Modernization Of Anka UAVs. (23.08.2021). <https://www.overtdefense.com/2021/08/23/tai-and-nescom-sign-a-contract-for-the-modernization-of-anka-uavs/>
25. Yusuf Çetiner. Pakistan Conducts Successful Flight Test of the Shaheen-III Ballistic Missile. (11.04.2022). <https://www.overtdefense.com/2022/04/11/pakistan-conducts-successful-flight-test-of-the-shaheen-iii-ballistic-missile/>
26. Yusuf Çetiner. Turkey and Pakistan Join Forces on the Development of Air-to-Air Missiles. (19.02.2024). <https://www.overtdefense.com/2024/02/19/turkey-and-pakistan-join-forces-on-the-development-of-air-to-air-missiles/>
27. 18th round of Pakistan-Turkiye HLMDG held at Defence Ministry. (16.02.2024). <https://www.pakistantoday.com.pk/2024/02/16/18th-round-of-pakistan-turkiye-hlmdg-held-at-defence-ministry/>
28. ABD-Türkiye arasındaki 23 milyar dolarlık F-16 sözleşmesinde azaltmaya gidildi. (12.07.2024). https://www.google.com/search?q=Temmuz&rlz=1C1BNSD_enAM1097AM1097&sourceid=chrome&ie=UTF-8

29. ABD yeni Türk pilotlara F-35 eğitimi vermeme kararı aldı. (07.06.2019). <https://www.politikyol.com/abd-yeni-turk-pilotlara-f-35-egitimi-vermeme-karari-aldi>
30. AMAN 2023 Davet Tatbikatının Resmi Açılış Töreni Bugün Yapılıyor. (10.02.2023). <https://www.defenceturkey.com/tr/icerik/aman-2023-davet-tatbikatinin-resmi-acilis-toreni-bugun-yapiliyor-5381>
31. AselPOD Elektro-Optik Keşif, Gözetleme ve Hedefleme Sistemine Bakış! (15.09.2020). <https://www.defenceturkey.com/tr/icerik/aselpod-elektro-optik-kesif-gozetleme-ve-hedefleme-sistemine-bakis-4204>
32. CİNNAH-2024 Tatbikatı Basın Duyurusu. (05.03.2024). <https://www.msb.gov.tr/Basin-ve-Yayin/Aciklamalar/54c8bad1bcff40108f62a35c015f8f83>
33. Doğu Akdeniz'de Gerçekleştirilen TURGUTREİS-9 Tatbikatı. (12.26.2024). <https://www.gundem03.com/haber/20256/dogu-akdeniz-de-gerceklestirilen-turgutreis-tatbikati.html>
34. Elbeyi Hasanlı. Türkiye Batı'yı şaşkına çevirdi. (14.03.2024). <https://www.tarihistan.org/turkiye-bati-yi-saskina-cevirdi/27544/>
35. En büyük savunma ihracatı... İmzalar atıldı!. (22.06.2020). <https://www.hurriyet.com.tr/ekonomi/en-buyuk-savunma-ihracati-imzalar-atildi-41547475>
36. F-16/F-35'lere talimat milli teknolojiden!. (02.07.2024). <https://www.yirmidort.tv/teknoloji/f-16-f-35lere-talimat-milli-teknolojiden-187735>
37. İstanbul'da Ayyıldız-2023 Tatbikatı gerçekleştirildi. (26.11.2023). <https://hibya.com/istanbulda-ayyildiz-2023-tatbikati-gerceklestirildi-227262>
38. Mehmet Yiğit Tanış. Türkiye ile Pakistan MMU KAAN projesinde işbirliğine yakın. (25.07.2023). <https://www.savunmatr.com/turkiye-ile-pakistan-mmu-kaan-projesinde-is-birligine-yakin/>
39. Muhammed Ayyıldız. TUSAŞ'ta Super Mushshak Sesleri. (19.10.2022). <https://www.savunma-sanayist.com/tusasta-super-mushshak-sesleri/>
40. Ömür Çelikdönmez. Türk İstihbaratı, darbe öncesi Pakistan'da kimlerle temas kurdu?. (17.04.2022). <https://www.dikgazete.com/yazi/turk-istihbarati-darbe-oncesi-pakistan-da-kimlerle-temas-kurdu-4431.html>
41. Pakistan ve Türkiye arasında T129 Atak Helikopteri Alımı için Sözleşme İmzalandı. (25.05.2018). <https://www.defenceturkey.com/en/content/pakistan-ve-turkiye-arasinda-t129-atak-helikopteri-alimi-icin-sozlesme-imzalandi-3019>
42. Pakistan'ın Bayraktar TB2 SİHA Tedarik Ettiği İddiası. (08.01.2022). <https://www.savunma-sanayist.com/pakistanin-bayraktar-tb2-siha-tedarik-ettiği-iddiasi/>
43. Pakistan denizaltıları Türkiye'ye emanet. (28.02.2018). <https://www.aa.com.tr/tr/ekonomi/pakistan-denizaltilari-turkiyeye-emanet/1075725>
44. Pakistan Silahlı Kuvvetleri Ataşesi'nden SDT'ye ziyaret. (10.07.2024). <https://www.defensehere.com/tr/pakistan-silahlı-kuvvetleri-atasesinde-sdt-ye-ziyaret>
45. SEDA'dan tam isabet. *Havelsan Dergi*, 2022, 13-14. s. 77. <https://www.havelsan.com.tr/kurumsal/medya-merkezi/havelsan-dergi#7865>.
46. TUSAŞ Pakistan F-16'larının modernizasyonu. (01.09.2014). <https://www.trthaber.com/haber/bilim-teknoloji/tusas-pakistan-f-16larinin-modernizasyonu-142495.html>

47. Türkiye ile Pakistan ortak füze üretecek. (16.02.2024). <https://www.ekonomim.com/gundem/turkiye-ile-pakistan-ortak-fuze-uretecek-haberi-730116>.
48. Türk Silahlı Kuvvetleri Eğitim Müesseselerinde Eğitim Görecek Pakistan ve Türk Askerî Personelinin Statülerinin Tayinine İlişkin Anlaşma. <https://www.resmigazete.gov.tr/eskiler/2014/10/20141003-1-1.pdf>
49. Türkiye Cumhuriyeti Hükûmeti ile Pakistan İslam Cumhuriyeti Hükûmeti Arasında Askerî İş Birliği Anlaşması. (2020). <https://goo.su/Rcwe>
50. Türkiye Cumhuriyeti Millî Savunma Bakanlığı ve Pakistan İslâm Cumhuriyeti Hükûmeti Savunma Üretim Bakanlığı Arasında Savunma Araştırma, Teknoloji ve Üretim Alanlarında İş Birliği Konulu Mutabakat Muhtırası. (2004). <https://www.resmigazete.gov.tr/eskiler/2005/02/20050211-1.htm>
51. Türkiye'den Pakistan'a 120 milyon TL'lik askeri hibe. (14.05.2017). <https://www.aa.com.tr/tr/dunya/turkiyeden-pakistana-120-milyon-tlik-askeri-hibe/817662>
52. Uluslararası Anadolu Kartalı-2023 Eğitimi Basın Duyurusu. (04.05.2023). <https://www.msb.gov.tr/Basin-ve-Yayin/Aciklamalar/53db670f439c40a6856cd0d9b4acfa16>
53. Yusuf Emir Işık. Bayraktar TB2 SİHA'ya Pakistan mühimmatı entegrasyonu. (16.01.2024). <https://www.defenceturk.net/bayraktar-tb2-sihaya-pakistan-muhimmatı-entegrasyonu>